ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ԳԱԼՈՒՍՏ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սահակյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Զարուհի Փոստանջյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «1921 թվականի մարտի 16-ի Մոսկվայի և հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագրերի հակահայկական ապօրինի հոդվածների դատապարտման և չճանաչման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-1176-22.02.2017-ԱՀ-010/0) վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը նպատակահարմար չի համարում ներկայացված օրենքի նախագծի քննարկումը և ընդունումը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանը:

Կից ներկայացվում են օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

Հարգանքով՝

ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

AJV-12-11_2017-03-23_01d10.1d7102-17_2017-03-30_C454A8

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

«1921 թվականի մարտի 16-ի Մոսկվայի և հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագրերի հակահայկական ապօրինի հոդվածների դատապարտման և չճանաչման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման դեպքում

«1921 թվականի մարտի 16-ի Մոսկվայի և հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագրերի հակահայկական ապօրինի հոդվածների դատապարտման և չճանաչման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումն առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

Եզրակացություն
«1921թ. մարտի 16-ի Մոսկվայի և հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագրերի հակահայկական ապօրինի հոդվածների դատապարտման և չճանաչման մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«1921թ. մարտի 16-ի Մոսկվայի և հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագրերի հակահայկական ապօրինի հոդվածների դատապարտման և չճանաչման մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաոլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն.**

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն:**

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«1921 թվականի մարտի 16-ի Մոսկվայի և հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագրերի հակահայկական ապօրինի հոդվածների դատապարտման և չճանաչման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

«1921 թվականի մարտի 16-ի Մոսկվայի և հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագրերի հակահայկական ապօրինի հոդվածների դատապարտման և չճանաչման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«1921թ. մարտի 16-ի Մոսկվայի և հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագրերի հակահայկական ապօրինի հոդվածների դատապարտման և չճանաչման մասին» ՀՀ օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

1. «1921թ. մարտի 16-ի Մոսկվայի և հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագրերի հակահայկական ապօրինի հոդվածների դատապարտման և չճանաչման մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Օրենք) ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

Եզրակացություն

«1921 թվականի մարտի 16-ի Մոսկվայի և հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագրերի հակահայկական ապօրինի հոդվածների դատապարտման և չճանաչման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

«1921 թվականի մարտի 16-ի Մոսկվայի և հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագրերի հակահայկական ապօրինի հոդվածների դատապարտման և չճանաչման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի թե ընդունումը, թե չընդունումը ՀՀ պետական բյուջեի և ՀՀ համայնքների բյուջեների մուտքերի ու ելքերի փոփոխման չեն հանգեցնում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«1921 թվականի մարտի 16-ի Մոսկվայի և հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագրերի հակահայկական, ապօրինի հոդվածների դատապարտման և չճանաչման մասին» ՀՀ օրենքի նախագծի՝ տնտեսական, այդ թվում փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«1921 թվականի մարտի 16-ի Մոսկվայի և հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագրերի հակահայկական, ապօրինի հոդվածների դատապարտման և չճանաչման մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ)՝ տնտեսական, այդ թվում փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագծով նախատեսվում է չճանաչել և դատապարտել Մոսկվայի՝ 1921 թվականի մարտի 16-ի և նույն թվականի հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագրերի՝ հայկական տարածքների կարգավիճակին վերաբերող դրույթները:

Նախագծի ընդունման և կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա նախատեսվում է *չեզոք* ազդեցություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«1921 թվականի մարտի 16-ի Մոսկվայի և հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագրերի հակահայկական, ապօրինի հոդվածների դատապարտման և չճանաչման մասին» ՀՀ օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«1921 թվականի մարտի 16-ի Մոսկվայի և հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագրերի հակահայկական, ապօրինի հոդվածների դատապարտման և չճանաչման մասին» ՀՀ օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) նախատեսվում է չճանաչել՝

- 1921 թվականի մարտի 16-ին Մոսկվայում Ռուսաստանի Սոցիալիստական Դաշնային Խորհրդային Հանրապետության կառավարության և Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարության միջև կնքված «Բարեկամության ու եղբայրության մասին» պայմանագրի՝ Հայկական պետականությանը վերաբերող հոդվածները,
- 1921 թվականի հոկտեմբերի 13-ին Կարսում կնքված «Բարեկամության մասին» պայմանագրի՝ հայրենի բնօրրանի բռնազավթումը վավերացնող հոդվածները,
- 1922 թվականի մարտի 16-ին քեմալական Թուրքիայի ու Խորհրդային Ռուսաստանի և 1922 թվականի մարտի 20-ին Խորհրդային Հայաստանի կառավարության կողմից Կարսի պայմանադրի վավերացումները:

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ առանձին ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ առանձին ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցությունը բացակայում է:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ արձանագրվել է Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա ազդեցություն չհայտնաբերվելու եզրակացություն:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-1176-22.02.2017-ԱՀ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

1921 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 16-Ի ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի ԿԱՐՍԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՀԱԿԱՀԱՅԿԱԿԱՆ ԱՊՕՐԻՆԻ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԴԱՏԱՊԱՐՏՄԱՆ ԵՎ ՉՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետությունը դատապարտում եւ չի ճանաչում 1921 թվականի մարտի 16- ին Մոսկվայում Ռուսաստանի Սոցիալիստական Դաշնային Խորհրդային Հանրապետության (ՌՍԴԽՀ) կառավարության եւ Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարության միջեւ կնքված «Բարեկամության ու եղբայրության մասին» պայմանագրի ՝ Հայկական պետականությանը վերաբերող ապօրինի հոդվածները :

Հոդված 2. Հայաստանի Հանրապետությունը դատապարտում եւ չի ճանաչում 1921 թվականի հոկտեմբերի 13- ին Կարսում կնքված « Բարեկամության մասին » պայմանագրի (Հայկական ՍԽՀ, Վրացական ՍԽՀ, Ադրբեջանական ՍԽՀ՝ մի կողմից, եւ Թուրքիայի միջեւ՝ մյուս կողմից, ՌՍԴԽՀ մասնակցությամբ) ՝ հայրենի բնօրրանի բռնազավթումը վավերացնող հոդվածները :

Հոդված 3. Հայաստանի Հանրապետությունը դատապարտում եւ չի ճանաչում 1922 թվականի մարտի 16-ին քեմալական Թուրքիայի ու Խորհրդային Ռուսաստանի եւ 1922 թվականի մարտի 20-ին Խորհրդային Հայաստանի կառավարության կողմից Կարսի պայմանագրի վավերացումները:

Հոդված 4. Հայաստանի Հանրապետությունը վերահաստատում է Թուրքիայի եւ Ադրբեջանի կողմից բռնազավթված հայրենի բնօրրանում Հայկական պետականության վերականգնման իրավունքը :

Հոդված 5 . Հայաստանի Հանրապետությունը հայրենի բնօրրանի տարածքներին վերաբերող միջազգային օրինական պայմանագրերից ճանաչում է Սեւրի հաշտության պայմանագրի Հայաստանի վերաբերյալ դրույթները, վավերական է համարում ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի՝ 1920 թվականի նոյեմբերի 22-ի Իրավարար վճիռը եւ միջոցներ է ձեռնարկում կենսակոչելու ուղղությամբ:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Աշխարհաքաղաքական և տարածաշրջանային արագընթաց զարգացումները, Մերձավոր Արևելքում նոր պետությունների առաջացման և առկա սահմանների հնարավոր փոփոխությունները և 2016 թվականի ապրիլի 2-5-ը Ադրբեջանի կողմից Արցախի Հանրապետության դեմ լայնածավալ պատերազմական գործողությունների սկսումը ակնհայտ դարձրեցին շուրջ 42 հազար քառակուսի կիլոմետր տարածքում ամփոփված Հայկական պետականությանը սպառնացող արտաքին լուրջ մարտահրավերները:

Մարտահրավերներին դիմակայելու և Հայկական միասնական ազգային անվտանգության ռազմավարական հայեցակարգ ստեղծելու և սպասարկելու կարևորագույն բաղադրիչը հայ ժողովրդի պատմական ու քաղաքական իրավունքների հռչակումն է իրեն պատկանող և ներկայում Թուրքիայի ու Ադրբեջանի կողմից բռնազավթման մեջ պահվող հայկական տարածքների վերաբերյալ:

Քաղաքական համահայկական օրակարգի ձևակերպման և կենսագործման համար կարևոր նշանակություն ունի Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից՝ «1921 թվականի մարտի 16-ի Մոսկվայի և հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագրերի հակահայկական ապօրինի հոդվածների դատապարտման և չճանաչման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունումը:

Մոսկվայի պայմանագիրը միջազգային իրավունքի կոպիտ խախտում է: Պայմանագիրը ստորագրող կողմերը՝ Ռուսաստանի Սոցիալիստական Դաշնային Խորհրդային Հանրապետությունը (ՌՍԴԽՀ) և Թուրքիայի Ազգային մեծ ժողովը միջազգայնորեն ճանաչված պետություն և միջազգային իրավունքի սուբյեկտ չէին, երկու կողմերի պատվիրակությունները չէին ներկայացնում իրենց երկրների օրինական իշխանությունները, հետևաբար՝ նրանց միջև ստորագրված և կնքված փաստաթուղթը միջազգային պայմանագրի իրավասություն չունի և անօրինական է (Պայմանագրային իրավունքի մասին 1969թ. Վիեննայի կոնվենցիա, հոդված 2, (1) (ա)):

Մոսկվայի այմանագրով երկու կողմերը որոշել են պայմանագրի կողմ չհանդիսացող երրորդ երկրի՝ Հայաստանի տարածքներին վերաբերող հարցեր, մինչդեռ պայմանագրերը կարող են վերաբերել միայն պայմանագիրը ստորագրող կողմերին և որևէ պարտավորություններ կամ իրավունքներ չեն ստեղծում պայմանագրին մաս չկազմող երրորդ կողմի համար՝ առանց նրա համաձայնության (Պայմանագրային իրավունքի մասին 1969թ. Վիեննայի կոնվենցիա, հոդված 34):

Պայմանագիրն անվավեր է, եթե կնքվելու պահին հակասել է ընդհանուր միջազգային իրավունքի պարտադիր նորմին (Պայմանագրային իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիայի 53-րդ հոդված):

Մոսկվայի պայմանագրով երկու կողմերը պարտավորեցրին հայկական կողմին հետագայում՝ 1921 թվականի հոկտեմբերի 13-ին ստորագրելու Կարսի պայմանագիրը, որը հիմնականում կրկնում էր Մոսկվայի պայմանագրի դրույթները:

Մոսկվայի և Կարսի պայմանագրերն իրենց էությամբ անօրինական փաստաթուղթ են և չեն ճանաչվում Հայաստանի Հանրապետության կողմից՝ ի տարբերություն Սևրի հաշտության պայմանագրի, որի կնքմանը մասնակցել են Թուրքիայի և Հայաստանի օրինական իշխանությունները, և որը հաստատվել է ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի իրավարար վճռով:

«Մոսկվայի ռուս-թուրքական կոնֆերանսը: 1921թ. մարտի 16-ի պայմանագիրը»[1]

Առաջին հոդվածով **կողմերը հրաժարվում էին ճանաչել այն միջազգային պայմանագրերը, որոնք անընդունելի կլինեին կողմերից յուրաքանչյուրի համար: Այդտեղ պետք է հասկանալ նաև Սևրի 1920թ. օգոստոսի 10-ի պայմանագիրը, որից Թուրքիան ձգտում էր ազատվել համառորեն: Ռուսաստանը, փաստորեն, ընդունում էր թուրքական Ազգային ուխտը՝ Թ ու ր ք ի ա հասկացության (սահմանների) մասին...[2]:**

Երրորդ հոդվածով **Նախիջևանի մարզը՝ Շարուր-Դարալագյազի գավառի մի մասով, Թուրքիան, որին անցել էր մարզը Ալեքսանդրապոլի պայմանագրով, վերահանձնում է Ադրբեջանին՝ որպես ինքնավար տարածք, բայց պայմանով, որ այն չի կարող տրվել երրորդ պետության, որպիսին հասկացվում է Հայաստանը...[3]:**

Կողմերը փոխադարձաբար ուժը կորցրած էին հայտարարում այն բոլոր պայմանագրերը, որոնք փոխադարձաբար չէին համապատասխանում միմյանց շահերին... (*հոդված վեցերորդ*)[4]:

Կողմերը պարտավորվում էին իրենց տարածքներում արգելել այնպիսի կազմակերպությունների ու խմբերի առաջացումն ու գոյությունը, որոնք կարող էին կառավարության դեր հավակնել մյուս կողմի (ամբողջի կամ մասի) սահմաններում: Դա կանխարգելում էր, օրինակ, հայկական որևէ կազմակերպության կողմից Արևմտյան Հայաստանում նման որևէ քայլ ձեռնարկելը... (*հոդված ութերորդ*)[5]:

Պայմանագրի *15-րդ հոդվածով* Ռուսաստանը պարտավորվում էր Անդրկովկասի հանրապետությունների նկատմամբ դիմել այնպիսի քայլերի, որպեսզի նրանք ճանաչեն Մոսկվայի պայմանագրի իրենց վերաբերող հոդվածները: Դա իրականացվելու էր հանրապետությունների կողմից Թուրքիայի հետ կնքվելիք պայմանագրերի միջոցով...[6]:

Քեմալական Թուրքիայի հետ Խորհրդային Ռուսաստանը ոչ միայն լավ հարաբերություններ էր հաստատել, այլև փաստորեն ռազմաքաղաքական դաշինքի մեջ էր գտնվում: Դա արտահայտվում էր նաև Թուրքիային զենք ու ոսկի (ֆինանսական միջոցներ) տրամադրելով: Ընդ որում՝ թուրքերը պահանջում էին այդ օգնության պարտավորությունը ձևակերպել նաև գրավոր, մտցնել առաջիկա պայմանագրում և այն կոչել դաշնակցային պայմանագիր...[7]:

---

[1] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր IV, Գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945թթ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010թ. էջ 324:

[2] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր IV, Գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945թթ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010թ. էջ 333:

[3] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր IV, Գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945թթ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010թ. էջ 334:

[4] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր IV, Գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945թթ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010թ. էջ 334:

[5] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր IV, Գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945թթ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010թ. էջ 334-335:

[6] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր IV, Գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945թթ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010թ. էջ 335:

[7] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր IV, Գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945թթ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010թ. էջ 326:

Կոնֆերանսի նախապատրաստության ընթացքում իր տեսակետն արտահայտեց նաև Խորհրդային Հայաստանը մասնավորապես 1921թ. հունվարի 8-ին քեմալական Թուրքիային ներկայացրած նոտայում: Մերժվում էին Թուրքիայի բռնազավթած տարածքների հանրաքվեի արդյունքներն ու օրինականությունը, հանրաքվե, որն անց էր կացվել զինագրավման և հայ բնակչությանը արտագաղթի ենթարկելու ու նրա հայրենիքը թուրքերով ու քրդերով բնակեցնելու պայմաններում[8]:

Կոնֆերանսի նախապատրաստության ընթացքը դրական արդյունքներ չէր խոստանում հայ ժողովրդին... Եվ չնայած կողմերի միջև դեռևս բավարար փոխհամաձայնություններ չէին կայացել, այնուամենայնիվ, 1921թ. փետրվարի 26-ին սկսվեց ռուս-թուրքական կոնֆերանսը և որոշ ընդհատումով տևեց մինչև մարտի 16-ը...[9]:

Քաղաքական հանձնաժողովի առաջին նիստը, որ կայացավ մարտի 10-ին, բացվեց սահմանների մասին հարցով: Ռուսական պատվիրակությունը հայտարարեց, որ իրենք ճանաչում են Թուրքիայի ազգային ժողովի ընդունած Ազգային ուխտը, ըստ որի՝ Թուրքիա էր հռչակվել թուրքերով բնակեցված երկիրը, որ նշանակում էր, թե Թուրքիա է նաև Արևմտյան Հայաստանը, որը հայոց ցեղասպանությունից հետո հայազրկվել էր և բնակեցվել թուրքերով ու քրդերով... Այսպիսով՝ Թուրքիայի կողմում էին թողնվում Կարսի մարզը և Սուրմալուն, որոնց վերաբերյալ բանավեճ ու քննարկում տեղի չեն ունենում, կարծես կողմերը բանակցությունների էին եկել հենց այդպիսի որոշումով, այսինքն՝ հարցը լուծված է եղել բանակցություններից դուրս: Ուստի թուրքական պատվիրակությունն անմիջապես հայտարարում է, թե «ինքն ընդունում է այդ սահմանը...»[10]:

Նախիջևանի հարցում թուրքական պատվիրակությունը կարծիք է հայտնում, թե քանի որ բնակչությունն է կանչել թուրքական զորքերին, ուստի այդ փաստի ուժով Նախիջևանը գտնվում է թուրքական հովանավորության ներքո: Չնայած դրան՝ ինքը համաձայն է այդ հովանավորությունը զիջել Ադրբեջանին, բայց պայմանով՝ այն չվերազիջվի երրորդ պետության[11]:

Քաղաքական հանձնաժողովի մարտի 14-ի հերթական նիստում նախորդ արձանագրության շտկումներից հետո քննարկվում է պայմանագիրը հոդված առ հոդված: Կողմերը ներկայացնում են պայմանագրի իրենց տարբերակները: Ռուս-թուրքական կոնֆերանսի վերջին նիստը կայացավ մարտի 16-ին[12]:

Ռուս-թուրքական պայմանագիրը, ըստ պայմանագրի նախաբանի, կոչվում է բարեկամության ու եղբայրության՝ հակառակ այն որպես «դաշինք» դիտելու Թուրքիայի հետևողական պահանջի: Դրա մերժումը ռուսական կողմը բացատրում էր Անգլիայի հետ իր հարաբերությունները բարելավելու, թշնամություն ցույց չտալու

---

[8] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր IV, Գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945թթ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010թ. էջ 327:

[9] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր IV, Գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945թթ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010թ. էջ 329:

[10] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր IV, Գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945թթ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010թ. էջ 330:

[11] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր IV, Գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945թթ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010թ. էջ 331:

[12] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր IV, Գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945թթ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010թ. էջ 332:

անհրաժեշտությամբ: Պայմանագիրն ունի 16 հոդված՝ երեք հավելվածներով՝ նվիրված սահմանների մանրամասն նկարագրությանը…[13]:

Մոսկվայի պայմանագիրը թուրքական դիվանագիտության հաղթանակն էր…: Իր քաղաքական նպատակների և համաշխարհային հեղափոխության անհեռանկար հույսերի համար Խորհրդային Ռուսաստանի ղեկավարությունը զոհաբերեց Հայաստանի ու հայ ժողովրդի շահերը, հայկական տարածքները նվիրաբերվեցին Թուրքիային…:

Քեմալական Թուրքիան Հայկական հարցը դարձրեց առևտրի (աճուրդի) առարկա Անտանտի ու Ռուսաստանի միջև և հասավ նրան, որ մեծապես շահեց երկուսից էլ: Մոսկվայում յուրացրեց հայկական հսկայական տարածքներ: Մոսկվայի կոնֆերանսի հետ միաժամանակ Լոնդոնում կայացած կոնֆերանսում (1921թ. փետրվարի 21-ից մարտի 14-ը)՝ մի կողմից՝ Անտանտի երկրների, և մյուս կողմից՝ պարտված Գերմանիայի ու Թուրքիայի միջև, թուրքական միացյալ պատվիրակությանը հաջողվեց մերժել տալ հայկական երկու պատվիրակությունների (Ա. Ահարոնյան և Պողոս Նուբար) առաջարկությունները Արևմտյան Հայաստանի մասին Սևրի պայմանագրի հոդվածները կենսագործելու և հայկական Կիլիկիայում Ֆրանսիայի հովանավորությամբ «վարչական ինքնավարություն» կազմավորելու վերաբերյալ… Իսկ Սևրի պայմանագիրը (հայկական հոդվածները) նենգափոխվեց Թուրքիայի արևելյան նահանգներում հայկական ազգային օջախի առաջարկությամբ, որը հետագայում նույնպես մերժվեց:

<u>Միջազգային իրավունքի կոպիտ խախտում պետք է համարել միջազգայնորեն չճանաչված երկու պետությունների (Ռուսաստան և Թուրքիա) կողմից երրորդ պետության (Հայաստան) կենսականորեն կարևոր հարցերի լուծումը՝ առանց նրա մասնակցության, հակառակ նրա ժողովրդի կամքի</u>…[14]:

Մոսկվայի պայմանագիրը դժբախտություն էր հայ ժողովրդի համար: Այն հանգուցալուծումն էր 1920թ. սկիզբ առած բոլշևիկ-քեմալական համագործակցության… Մոսկվայի պայմանագիրը նպաստեց քեմալական Թուրքիայի ինքնահաստատմանը, միջազգային ասպարեզում նրա դերի ուժեղացմանը: Նշելով Հունաստանի նկատմամբ արևմուտքում տարած հաղթանակների մասին՝ Մուստաֆա Քեմալը շեշտում է, որ դա հնարավոր դարձավ, որովհետև «թիկունքում՝ հյուսիսում և արևելքում, հանգստությունը լիովին ապահովված էր Խորհրդային Ռուսաստանի հետ բարեկամությամբ և նրա առատաձեռն օգնությամբ»: Պատմական տվյալ ժամանակաշրջանում ազգայնական Թուրքիան պետք եկավ Խորհրդային Ռուսաստանին, ուստի առաջինը լավագույնս օգտագործեց այդ հանգամանքը՝ իր օգտին զիջումներ գրանցելու համար: Զիջումներն արվեցին մի պետության, որն իրավահաջորդն էր ցեղասպան Օսմանյան կայսրության, իսկ նա ոչ միայն չխոստովանեց տեղի ունեցած ոճրագործությունը, այլև շարունակեց նույն քաղաքականությունը: Իսկ նրա հետ դաշնակցած Խորհրդային Ռուսաստանը, աչք փակելով այդ ամենի առաջ, փաստորեն ստանձնեց հովանավորի դեր և ստորագրած պայմանագրով հարկադրեց Խորհրդային Հայաստանին ընդունել սեփական կորուստները, դրանց մասին որոշումները:

---

[13] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր IV, Գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945թթ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010թ. էջ 333:

[14] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր IV, Գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945թթ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010թ. էջ 335:

Մոսկվայի պայմանագիրը միջազգային իրավունքի կոպիտ խախտում է և դրանով իսկ ենթակա է վերանայման: Նույնը վերաբերում է Կարսի պայմանագրին, որը կնքվելու էր առաջիկայում[15]:

Կարսի կոնֆերանսը: 1921թ. հոկտեմբերի 13-ի պայմանագիրը[16]

Մոսկվայի ռուս-թուրքական պայմանագիրը (հոդված 15-րդ) Ռուսաստանին պարտավորեցնում էր Անդրկովկասի հանրապետությունների նկատմամբ դիմել քայլերի, որպեսզի նրանք ընդունեն տվյալ պայմանագրի՝ իրենց վերաբերող հոդվածները: Դա տեղի ունեցավ Կարսի կոնֆերանսում[17]:

Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի խորհրդային հանրապետություններ – Թուրքիա կոնֆերանսը, Ռուսաստանի մասնակցությամբ, կայացավ Կարսում 1921թ. սեպտեմբերի 26-ից մինչև հոկտեմբերի 13-ը[18]:

Հոկտեմբերի 13-ին ստորագրվեց այսպես կոչված բարեկամության մասին պայմանագիրը Հայկական ՍԽՀ, Ադրբեջանական ՍԽՀ ու Վրացական ՍԽՀ՝ մի կողմից, և Թուրքիայի միջև՝ մյուս կողմից, ՌՍԴԽՀ մասնակցությամբ: Այն, ըստ էության, վերարտադրում էր մարտի 16-ի պայմանագրի որոշումները, ինչպես և սպասվում էր ու կանխորոշված էր: Հայկական շահերի համար ծավալված պայքարն ուներ միայն ցուցադրական նշանակություն: Հայ ժողովրդի շահերը զոհաբերվել էին Մոսկվայում, իսկ Կարսում այդ որոշումների տակ դրվելու էր նաև ՀՍԽՀ ներկայացուցչի ստորագրությունը: Միասնական պայմանագիր ստորագրելով Անդրկովկասի հանրապետությունների հետ՝ քեմալականները պնդեցին, որ պայմանագրի վավերացումը կատարվի յուրաքանչյուր հանրապետության կողմից առանձին...[19]:

Կարսի պայմանագրի վավերացումը տեղի ունեցավ 1922թ. մարտին: Խորհրդային Հայաստանի կառավարությունը Կարսի պայմանագիրը վավերացրեց մարտի 20-ին, իսկ քեմալական Թուրքիայի և Խորհրդային Ռուսաստանի փոխադարձ պայմանավորվածությամբ՝ վերջիններս Կարսի պայմանագիրը վավերացրին միաժամանակ՝ մարտի 16-ին՝ Մոսկվայի ռուս-թուրքական թալանչիական պայմանագրի տարեդարձի օրը: Վավերագրերի փոխանակումը կայացավ Թիֆլիսում:

Մուստաֆա Քեմալ փաշան 1922թ. մարտի 1-ին Ազգային մեծ ժողովում արտասանած ճառում բարձր գնահատական տվեց ինչպես Մոսկվայի, այնպես էլ Կարսի պայմանագրերին՝ որպես Թուրքիայի արտաքին քաղաքականության նպաստավոր արդյունքներ: Կարսի պայմանագրով, հայտարարել է Մ. Քեմալը, «Արևելքում մեր գրված փաստական դիրքը ստացավ իրավաբանական ձև: Սույն պայմանագիրը Սևրի պայմանագրի անընդունելի լինելը ապացուցող գործոններից

---

[15] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր IV, Գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945թթ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010թ. էջ 337:

[16] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր IV, Գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945թթ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010թ. էջ 367:

[17] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր IV, Գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945թթ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010թ. էջ 367:

[18] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր IV, Գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945թթ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010թ. էջ 371:

[19] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր IV, Գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945թթ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010թ. էջ 372:

մեկն է: Այսպես կոչված «հայկական հարցը», որը ցանկանում են լուծել ավելի շուտ կապիտալիստական աշխարհի տնտեսական շահերով, գտավ իր ամենաճիշտ լուծումը Կարսի պայմանագրում»:

Կարսի կոնֆերանսը Հայաստանի համար որևէ հարց չէր լուծելու: Այն կրկնեց Մոսկվայի մարտի 16-ի որոշումները՝ միայն Հայաստանի ներկայացուցչի ստորագրությամբ[20]:

Դաշինքի մեջ մտած քեմալական Թուրքիան և Խորհրդային Ռուսաստանը, փաստորեն, բաժանեցին Հայաստանը, դիվանագիտորեն ձևակերպեցին իրենց որոշումները՝ առանց և ընդդեմ երրորդ պետության՝ Խորհրդային Հայաստանի, ինչը միջազգային իրավունքի ամենակոպիտ խախտում ու ոտնահարում էր: Խորհրդային Ռուսաստանը հայ ժողովրդի շահերը զոհաբերեց հանուն իր արևելյան քաղաքականության ու համաշխարհային հեղափոխության: Հայ ժողովրդի ու Հայաստանի վզին փաթաթված այդ որոշումների վերանայումը մնում է որպես հայ ժողովրդի արդարացի պահանջ[21]:»:

[20] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր IV, Գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945թթ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010թ. էջ 373:

[21] ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստիտուտ, Հայոց Պատմություն, հատոր IV, Գիրք առաջին, Նորագույն ժամանակաշրջան (1918-1945թթ.), © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010թ. էջ 374: